

փափաքէի եւ տեճչայ[ի] յգալ աւ սուրբ ատեանդ, որ եւ իսկ ի բանի թղթոջս յայտ առնէ[մ] առ ի երկրպագութիւն սրբութեանդ: Մանաւանդ տեառն երջանկի Ուրբանոսի ութերրորդի, փոխումն ի մեզ հնչեցուցին եւ զսրբոյ հօրդ իսկ կայացելոյդ ի տեղի սրբոյն Պետրոսի չուարարեալ եկաք մինչ Ե [5] աւուր ճանապարհ, այլ երկեայ պատճառոյ իմիք, զոր եկեալ եղբարքդ յայդտ իսկ առնեն, վասն որոյ ո՛չ կարացի գալ եւ կատարել զպատշաճս մեր եւ զհնազանդութիւնս, զոր պահանջէ ի մէնջ սուրբ Ատեանդ: Յաղագս որոց իրի ընտրեցի ի տեղի իմ եւ փոխանորդ ֆրա պատրի Մաթեոսն Յովանէսի՝ մեծաւոր Ապարաներոյ վանից եւ պատրի ֆրա Գրիգոր Ծործորեցի՝ սիրելի որդեակքդ մեր, գալ եւ հնազանդութիւն ցուցանել ի տեղի մեր, մանաւանդ զմեր գերութիւնս եւ զվիշտս մի զկնի միոյ ծանուցանել: Երես անկեալ եւ հեզաբար քան զկարն խնդրեմ ի սրբագունի հօրէդ, որի սրբութենէդ օրհնութիւն եւ զթուխտ թողութեան հանդերձ սուրբ մեռոնաւ շնորհեա գերելոյս: Դարձեալ երկրորդաբար աղաչելով ժտեմ, որ մեր ստրկութիւնս նախ, որպէս զի ամենայն եպիսկոպոսք զոսծիկն յամ յամէ ընկալնուն, եւս մխիթարին ի սուրբ ատենէդ յաւել հեշտագոյն են քան զմեզ, մեք որք եմք ի գերութեան ի յօտարութեան յաղքատութեան հանդերձ եկեղեցականօք եւ ժողովրդօք եւ եմք հարկատուք ի յանօրինաց եւ պարտաւորք անկեալ եմք անմխիթար ուստի օգնականութիւն ոչ ունիմք, եթէ զնամք ի մէջ անօրինաց եւ անհաւատից մութամք՝ չէ հարկ, եւ թէ լինի ձեր սուրբ անուանդ չէ վայելել: Մանաւանդ վանորայքս խանգարեալ կան, որ Գ [3] վանքն նոր նորոգեցի, այլքն կա այնպէս: Եթէ թողուցումք այլ ազգ բռնութեամբ կու տիրեն: Սուրբ հայր, նայեա՛ զգերեալքս, եւ այցելու լեր անկելոցս, զի յոյժ վհատեալ եմք: Այսք ամենայն մտերմաբար գրեցուցի, եւ յատուկ ձեռօք ենթագրեցի: